ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » հունիսի 2019 թ. N 413 - Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. դեկտեմբերի 27-ի 1515–Ն որոշման 23-րդ կետի «ա» ենթակետով՝

հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ.

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում և «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովով միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 1515-Ն որոշման N 3 և N 4 հավելվածներում բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 08 բաժնի 04 խմբի 02 դասի «1033 Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին» ծրագրի շրջանակներում իրականացվող «12001 Պետական աջակցություն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին» միջոցառման՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական

դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով նախատեսված 20,000.0 հազար դրամը՝ ազգային փոքրամասնությունների լեզվի, մշակույթի, կրթության, էթնիկ ինքնության պահպանությանն ու զարգացմանը, ինչպես նաև իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործունեությանը պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով, բաշխել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների միջև՝ համաձայն NN 1, 2, 3 հավելվածների:

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 1
Վարչապետի աշխատակազմի
ղեկավարի 2019 թվականի
հունիսի 3 - ի N 413-Լ հրամանի

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին հատկացվող 20 մլն. դրամ գումարից 8,998,000 դրամի հավասար բաշխումը՝ ըստ էթնիկ համայնքների

N	Էթնիկ համայնքը	Կազմակերպության անունը	Բանկի անվանումը և հաշվեհամարը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)
1.	Ասորական	Հայաստանի «Աթուռ» ասորիների ասոցիացիա	«Հայէկոնոմբանկ» 163048120741	409,000
		«Ասորական«Աշուր» երիտասարդական կենտրոն» ՀԿ	«Յունիբանկ» 24124000620500	409,000
2.	Բելառուսական	Հայաստանի «Երևանի բելառուսների համայնք «Բելառուս»» ՀԿ	«Արդշինինվեստբանկ» 247010017991	818,000
3.	Գերմանական	«Տեվտոնիա» գերմանացիների մշակութային հասարակական կազմակերպություն	«Կոնվերսբանկ» 1930026634280100	818,000
4.	Եզդիական	«Եզդիների ազգային միություն» ՀԿ	«Արդշինինվեստբանկ» 2470100046920000	409,000
		«Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ	«Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մասնաճյուղ 163058701547	409,000
5.	Լեհական	Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական ՀԿ	«Հայէկոնոմբանկ» 163288059054	818,000
6.	Հունական	«Հայաստանի հունական համայնքների միություն» ՀԿ	«ԱյԴի բանկ» ՓԲԸ 11813011391300	728,000
		Երևանի «Պոնտի» հունական ՀԿ	«Ամերիաբանկ» ՓԲԸ 15700 10010540100	90,000
7.	Հրեական	«Հայաստանի հրեական համայնք» ՀԿ	«Յունիբանկ» 24100100675800	818,000

8.	Ռուսական	«Ռոսիա» ՀԿ	«Արդշինբանկ» 2480101523330000	818,000
9.	Վրացական	«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական ՀԿ	«Հայէկոնոմբանկ» 163008136661	818,000
10.	Ուկրաինական	«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ	«Ամերիաբանկ» 1570001167470300	818,000
11.	Քրդական	«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ	«ԱյԴի բանկ» ՓԲԸ Աբովյանի մասնաճյուղ 1180310243 18	818,000
Ընդամենը				8,998,000

Հավելված N 2
Վարչապետի աշխատակազմի
ղեկավարի 2019 թվականի
հունիսի 3-ի N 413 - Լ հրամանի

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին հատկացվող 20 մլն. դրամ գումարից 1,002,000 դրամի հատկացումը Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի անդամների ընդհանուր միջոցառումների իրականացման նպատակով

	Նպատակը	Կազմակերպության անունը	Բանկի անվանումը և հաշվեհամարը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)
1.	Ընդհանուր միջոցառումների իրականացման համար	Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի անդամներ «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ	«ԱյԴի բանկ» ՓԲԸ 11817044266900	1,002,000

Հավելված N 3
Վարչապետի աշխատակազմի
ղեկավարի 2019 թվականի
հունիսի 3-ի N 413 - Լ
հրամանի

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին հատկացվող 20 մլն. դրամ գումարից
10մլն. դրամի բաշխումը ըստ ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների կողմից (նաև՝ Խորհրդի անդամ չհանդիսացող) ներկայացված և Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդում հաստատված՝ ազգային մշակույթի զարգացմանը, լեզվի և ինքնության պահպանմանը, նրանց իրազեկվածության բարձրացմանն ուղված առավել կարևոր նախաձեռնությունների և ծրագրերի՝ առավելություն տալով պետականություն չունեցող և/կամ մեծաթիվ համայնքները (եզդիական, ասորական, քրդական) ներկայացնող կազմակերպությունների ծրագրերին

Կազմակերպության անունը	**Ծրագրի անվանումը**	**Բանկի անվանումը և հաշվեհամարը**	**Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)**
«Եզդիների ազգային միություն»	Ազգային տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ, «Եզդի ընտանիքի օրացույց»-ի տպագրում	«Արդշինինվեստբանկ» 2470100046920000	1.500.000
«Եզդիների ազգային կոմիտե»	Եզդիաբնակ համայնքներում եզդիների շրջանում իրենց իրավունքների ծանոթացում, խնդիրների վերհանում և զեկույցի պատրաստում	«Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մասնաճյուղ 163058701547	800.000
«Երիտասարդ եզդիներ»	«Հայ-եզդիական բարեկամության ամրապնդման գործում մեծ ներդրում ունեցող եզդի գործիչների մասին ֆիլմի պատրաստում	«ԱյԴի բանկ» ՓԲԸ 11811004940000	550.000
«Աթուռ» ասորական ասոցիացիա	ՀՀ ասորական համայնքի սպորտային խմբերի մասնակցությունը Իրանում կազմակերպվող ամենամյա համաասորական խաղերին,	Հայէկոնոմբանկ» 163048120741	900.000

	Ազգային երգի-պարի համույթի միջին խմբի համար տարազների ձեռքբերում		
«Ասորական« Աշուր» երիտասարդական կենտրոն» ՀԿ	Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի համար ասորական դասագրքի պատրաստում	«Յունիբանկ» 24124000620500	900.000
«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ»	Ազգային տոների կազմակերպում, «Զագրոս» թերթի տպագրման ծախսերի աջակցում, «Ռյա Թազա» թերթի աջակցում, «Քուրդիստան» կոմիտեի և «Հայաստանի քրդական խորհուրդ» կազմակերպությունների հաշվետու կոնֆերանս	«ԱյԴի բանկ»ՓԲԸ Աբովյանի մասնաճյուղ 118031024318	1.300.000
Հայաստանի «Երևանի բելառուսների համայնք «Բելառուս»» ՀԿ	Միջոցառում՝ նվիրված Բելառուսի ազատագրման 75-ամյակին	«Արդշինինվեստբանկ» 247010017991	450.000
«Իվերիա» վրացական բարեգործական համայնք	Գրական-երաժշտական երեկո՝ նվիրված Հ.Թումանյանի ծննդյան 150 ամյակին	«Հայէկոնոմբանկ» 163008136661	450.000
«Հայաստանի հրեական համայնք»	«Հնագույն դարաշրջանից մինչ մեր օրերը» Հայաստանի հրեաների մասին գրքի թարգմանություն ռուսերեն և անգլերեն լեզուներով	«Յունիբանկ» 24100100675800	600.000
«Ռոսիա» ՀԿ	Միջոցառում՝ նվիրված Մեծ Հայրենական Պատերազմի հաղթանակի 75-ամյա հոբելյանին ընդհառաջ	«Արդշինբանկ» 2480101523330000	500.000
«Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն	Սիլվա Կապուտիկյանի բանաստեղծությունների ազգային փոքրամասնությունների լեզուներով թարգմանված ժողովածուի հրատարակում, գրական երեկոի և շնորհանդեսի կազմակերպում	«ԱյԴի բանկ» ՓԲԸ 11817044266900	500.000

«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա	Արտագնա համերգի կազմակերպում ուկրաինական համայնք ունեցող Իջևան քաղաքում	«Ամերիաբանկ» 1570001167470300	450.000
«Տեվտոնիա» գրմանացինների մշակութային ՀԿ»	«Կատարինեֆիլդ՝ Վրաստանի գերմանական մայրաքաղաք» գրքի շնորհանդես, գրքի տպագրում 100 հատ:	«Կոնվերսբանկ» 1930026634280100	300.000
«Հայաստանի հունական համայնքների միություն»	Ամառային մանկական ճամբար ազգությամբ հույն երեխաների համար	«ԱյԴի բանկ» ՓԲԸ 11813011391300	500.000
ՀՀ «Պոնտի» հունական ՀԿ	1.Նոր հունարեն լեզվի Օլիմպիադա, 2.Մանկապատանեկան նկարչական մրցույթ՝ նվիրված Հունաստանի ազգային տոներին	«Ամերիաբանկ» ՓԲԸ 15700 10010540100	300.000
Ընդամենը			10.000.000